

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

*Ընդունվել է Բանկի Տնօրինության 14.11.2018թ. թիվ 01/32/18 որոշմամբ,
գործող խմբագրությունը՝ 01.07.2022թ. թիվ 01/83/22 որոշմամբ և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:*

	A.4.	Վերականգնվող էներգետիկայի ոլորտին տրամադրվող վարկեր
	A.4.1.	Արդյունաբերական նպատակներով կառուցվող արևային, հիդրո, հողմային կայանների ֆինանսավորում
	A.4.2.	Բիզնեսի սեփական կարիքների համար կառուցվող արևային, հիդրո, հողմային կայանների/համակարգերի ֆինանսավորում

1. ՎԱՐԿԵՐ (A.4.1, A.4.2.)

#	Պայմաններ	Վերականգնվող էներգետիկայի ոլորտին տրամադրվող վարկեր (A.4),	ԳՀՀ "Վերականգնվող էներգետիկայի վարկավորում" ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում / պարտադիր է Ծրագրի խորհրդատուի

						Ֆինանսական և տեխնիկական դրական եզրակացությունը/		
	Վարկավորվող ծրագրեր	Ֆինանսավորման ենթակա են արդյունաբերական կամ սեփական կարիքների համար վերականգնվող էներգիայով /արևային, հիդրո, հողմային էներգիա/ շահագործվող կայանների/համակարգերի կառուցման/վերազինման ծրագրերը, որոնք ունեն նմանատիպ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ օրենքով սահմանված բոլոր թույլտվությունները:						
1	Վարկի գումար	մինչև 10,000,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթ					Վարկերը տրամադրվում են միայն ՀՀ դրամով	
2	Վարկի ժամկետ	A.4.1 – առավելագույնը 15 տարի A.4.2– առավելագույնը 8 տարի					Մինչև 12 տարի	
3	Մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ						Մինչև 3 տարի	
4	Տարեկան տոկոսադրույք A.4.1	ԳՅ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		
		Լողացող տոկոսադրույքով	Հաստատուն տոկոսադրույքով	Լողացող տոկոսադրույքով	Հաստատուն տոկոսադրույքով	Լողացող տոկոսադրույքով	Հաստատուն տոկոսադրույքով	Սկսած 9.5%
		սկսած 10.5% ¹	սկսած 11.9%	սկսած 7.9% ¹	սկսած 9.0%	սկսած 6.3% ¹	սկսած 8.0%	

<p>լողացող բաղադրիչի նկարագրություն</p>	<p>Հաստատուն բաղադրիչ՝ 4.4% + փոփոխուն բաղադրիչ (6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը)</p>		<p>Հաստատուն բաղադրիչ՝ 5.6% + փոփոխուն բաղադրիչ (ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը /ICE LIBOR USD 6 Month/)</p>		<p>Հաստատուն բաղադրիչ՝ 6.3% + փոփոխուն բաղադրիչ (Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը՝ միայն դրական մեծություն լինելու պարագայում /ICE LIBOR EUR 6 Month/)</p>		
<p>Տարեկան տոկոսադրույքⁱⁱ A.4.2</p>	<p>ՀՀ դրամ</p>		<p>ԱՄՆ դոլար</p>		<p>Եվրո</p>		
	<p>Լողացող տոկոսադրույքով</p>	<p>Հաստատուն տոկոսադրույքով</p>	<p>Լողացող տոկոսադրույքով</p>	<p>Հաստատուն տոկոսադրույքով</p>	<p>Լողացող տոկոսադրույքով</p>	<p>Հաստատուն տոկոսադրույքով</p>	
	<p>սկսած 11.5%ⁱ</p>	<p>սկսած 12.9%</p>	<p>սկսած 8.9%ⁱ</p>	<p>սկսած 9.9%</p>	<p>սկսած 7.3%ⁱ</p>	<p>սկսած 9.0%</p>	
<p>լողացող բաղադրիչի նկարագրություն</p>	<p>Հաստատուն բաղադրիչ՝ 5.4% + փոփոխուն բաղադրիչ (6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը)</p>		<p>Հաստատուն բաղադրիչ՝ 6.6% + փոփոխուն բաղադրիչ (ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը)</p>		<p>Հաստատուն բաղադրիչ՝ 7.3% + փոփոխուն բաղադրիչ (Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը՝ միայն դրական մեծություն լինելու պարագայում /ICE</p>		

		p)		/ICE LIBOR USD 6 Month/)		LIBOR EUR 6 Month/)	
5	<p>Վարկի տրամադրման վճար (զանձվում է միանվագ՝ վարկի տրամադրման պահին):</p> <p>Բանկի որոշմամբ կարող է սահմանվել վարկի տրամադրման գումարը վճարելու ժամանակացույց, որի առկայության դեպքում վարկը վաղաժամկետ մարելիս վարկի տրամադրման գումարի չվճարված մասը ենթակա է մարման վարկի վաղաժամկետ մարման հետ միաժամանակ կամ Բանկի կողմից սահմանված այլ կարգով:</p>	<p>Մինչև 1 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.5 % վարկի պայմանագրային գումարից 1-ից 2 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.7 % վարկի պայմանագրային գումարից 2 տարուց ավելի մարման ժամկետով վարկեր՝ 0-1.5 % վարկի պայմանագրային գումարից</p> <p>Դրամական միջոցներով ապահովված վարկեր՝ 0 %</p>					Մինչև 1,5%
6	Տույժեր ժամկետանց գումարի դիմաց ⁱⁱⁱ	Տույժ՝ ժամկետանց վարկի և ժամկետանց տոկոսագումարի 0.13 % չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար,					
8	Վարկի մարում	Համաձայն գրաֆիկի կամ ժամկետի վերջում (ամսական, եռամսյակային, կիսամյակային, կամ պայմանագրով նախատեսված այլ պարբերականությամբ)					
9	Վաղաժամկետ մարում ^{iv}	Պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել վաղաժամկետ մարման վճար, վաղաժամկետ մարվող գումարի մինչև 6 ամսվա տոկոսագումարի չափով					

10	Վարկի ապահովությունը	<p>դրամական միջոցներ, ՊԿՊ, ոսկու ստանդարտացված ձուլակտորներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր</p> <p>հիմնական միջոցների գրավ, երաշխիքներ և երաշխավորություններ այլ արժեթղթերի գրավ</p> <p>դրամական հոսքեր, շրջանառու միջոցներ կամ խառը գրավ</p> <p>Որպես լրացուցիչ ապահովություն, բիզնեսի հիմնադիրների/իրական շահատուների անձնական երաշխավորություններ</p>	
11	Վարկ / գրավ հարաբերակցություն՝	<p>դրամական միջոցներ, ՊԿՊ, ոսկու ստանդարտացված ձուլակտորներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր - առավելագույնը 100 % (եթե վարկը և ապահովությունը նույն արժույթով են կամ տարբեր, բայց SDR-ի գամբյուղում ներառված արժույթով) և առավելագույնը 95 % (եթե վարկը և ապահովությունը տարբեր արժույթով են, բացի SDR-ի գամբյուղում ներառվածներից)</p> <p>ա) անշարժ գույքի դեպքում՝ գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 80 %, եթե վարկառուի ՊՍԳ ցուցանիշը կազմում է 1.5 և ավել ապա 90%,</p> <p>բ) շարժական գույքի դեպքում՝ գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 50 %, եթե վարկառուի ՊՍԳ ցուցանիշը կազմում է 1.5, ապա 60 %, նոր ձեռքբերվող կամ վարկային հայտի ներկայացման ամսաթվին նախորդող վեց ամիսների ընթացքում ձեռքբերված շարժական գույքի՝ մինչև 80 %</p> <p>գ) ապրանքանյութական պաշարների (պատրաստի արտադրանք, հումք-նյութեր և այլն) դեպքում՝ գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 30 %, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 40 %,</p> <p>դ) դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավել քան բանկային հաշիվներով իրականացվող առնվազն վերջին 6 ամիսների առավելագույնը վերջին 12 ամիսների միջին ամսական շրջանառության 50 %,</p> <p>ե) բաժնեմասերի դեպքում՝</p> <ul style="list-style-type: none"> - գործող բիզնեսի բաժնեմասերի պարագայում գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 80 %,- դեռևս չգործող բիզնեսի (ծրագրային վարկերի^{vi}) բաժնեմասերի պարագայում՝ գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 60%: 	
12	Գրավի ապահովագրություն	Տարեկան ապահովագրություն՝ վարկի գումարի/մնացորդի չափով	

13	Հայտի ուսումնասիրության և հաճախորդին որոշման մասին ծանուցման ժամկետ	մինչև 15 աշխատանքային օր՝ փաստաթղթերի ամբողջական փաթեթի ստացման օրվանից		
		Ուսումնասիրության ընթացքից ելնելով վերոնշյալ ժամկետները կարող են երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան ևս 10 աշխատանքային օր		
14	Վավերականության ժամկետ (վարկի տրամադրման մասին որոշման գործողության ժամկետ)	- 45 օր, եթե այլ բան նախատեսված չէ իրավասու մարմնի կայացրած որոշմամբ		
15	Վարկի վերահաստատման ժամկետ	Վավերականության ժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ քան 60 օր վարկի տրամադրման մասին որոշում կայացնելու օրից		
16	Հաշվի բացում Ամերիաբանկ ՓԲԸ-ում	Պարտադիր		
17	Վարկի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճար ^{vii}	500 000 ՀՀ դրամ		
18	Այլ պայմաններ			Ծրագրով սահմանված էներգաառուդիտի վճարի 60% իրականացվում է հաճախորդի կողմից

- ⁱ Հաստատուն տոկոսադրույքով վարկավորում իրականացվում է ՀՀ դրամով առավելագույնը 5 տարի ժամկետով, ԱՄՆ դոլարով և Եվրո-ով՝ առավելագույնը 10 տարի ժամկետով:
- ⁱⁱ Մույն պայմանների 4-րդ կետում նշված լողացող տարեկան տոկոսադրույքը կարող է տարբերվել ներկայումս նշվածից՝ փոփոխուն բաղադրիչի վերանայումից կախված:
- ⁱⁱⁱ Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակվում է Պայմանագրով նախատեսված տոկոսադրույքի հաշվարկումը:
- ^{iv} Տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:
- ^v Եթե երաշխավորությունը հանդիսանում է հիմնական ապահովման միջոց և դրա հետ միասին ընդունվում է նաև գրավ, ապա այդ դեպքում վարկ/գրավ հարաբերակցություն չի հաշվարկվում: Ընդ որում, նշված դեպքերում պարտավորությունների ապահովման միջոցի հիմնական և/կամ լրացուցիչ լինելու հանգամանքի մասին նշումը կատարվում է վարկային եզրակացություններում և հաստատվում իրավասու մարմնի որոշմամբ:
- ^{vi} Եթե ծրագրային վարկի դեպքում ծրագրի սեփականատերը/կապալառուն նախկինում իրականացրել է նմանօրինակ ծրագիր, վարկ/գրավ հարաբերակցությունը սահմանվում է գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 80 %:
- ^{vii} Վարկավորման պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման ենթակա է վճարման հաճախորդի կողմից, վերջինիս նախաձեռնությամբ և ցանկությամբ ներկայացված վերանայման հայտի բավարարման դեպքում՝ Բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից այդ հայտի հիման վրա կատարված վերլուծության եզրակացության հիմքով: Ընդ որում, որպես կանոն վարկավորման պայմանների վերանայման այլ դեպքերում սույն սակագինը ենթակա է գանձման Մեծ վարկային կումիտեի որոշմամբ: